# «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 372-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 372. Տուժանքի առավելագույն չափը և այն պակասեցնելը**

1. Տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի եռապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանը խախտող համաձայնությունն առոչինչ է:
3. Եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանը կամ Ֆինանսական համակարգի հաշտարարը պակասեցնում է այն:
4. Գրավի առարկայի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու դեպքում գրավատուն կամ պարտապանը, եթե գրավատուն պարտապանը չէ, տուժանքի նվազեցման պահանջով կարող է դիմել դատարան, իսկ պահանջը Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը ենթակա լինելու դեպքում՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
5. Դատարանի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից տուժանքը նվազեցնելու դեպքում գրավառուն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր դառնալու պահից 30-օրվա ընթացքում կատարում է վերահաշվարկ և գրավատուին վերադարձնում տուժանքի նվազեցված չափին համապատասխան գումար:»:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 372.1-րդ հոդվածով.

**«Հոդված 372.1. Տուժանքի վճարման գծով պարտավորության դադարումը**

1. Պարտավորության խախտման օրվանից մեկամսյա ժամկետում գրավառու բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սահմանված կարգով պարտքի բռնագանձման, այդ թվում՝ արտադատական կարգով գործընթացը չսկսելու դեպքում մեկամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չի հաշվարկվում:
2. Գրավառու բանկի կամ վարկային կազմակերպության կողմից առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման ծանուցումը սույն օրենսգրքով սահմանված կարգով հանձնելու օրվանից երկու ամիսը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում գրավի առարկան գրավառուին կամ գրավառուի նշած անձին ի սեփականություն չանցնելու կամ ուղղակի վաճառքով չիրացվելու, իսկ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելիս՝ գրավի առարկայի իրացման գործընթացը չսկսվելու դեպքում մեկամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չի հաշվարկվում:
3. Գրավառու բանկի կամ վարկային կազմակերպության և գրավատուի, ինչպես նաև պարտապանի, եթե գրավատուն պարտապանը չէ, միջև սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ժամկետում բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացը սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնություն կնքելու դեպքում տուժանքը հաշվարկվում է մինչև երկարաձգման ժամկետի ավարտը:
4. Բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացը երկարաձգելու մասին համաձայնությունը կնքվում է նույն ձևով, ինչ գրավի պայմանագիրը:
5. Սույն հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված ժամկետների ընթացքը կասեցվում է գրավի առարկայի վրա դրա իրացմանը խոչընդոտող արգելանք դրվելու կամ դատական ակտով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանը սույն հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսված գործողությունների կատարումը արգելելու դեպքում՝ մինչև այդ խոչընդոտների վերացումը:
6. Սույն հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված պայմանների խախտմամբ տուժանքի վճարման վերաբերյալ համաձայնությունը առոչինչ է:։:

**Հոդված 3.** Օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

։Սույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, որը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի եռապատիկը:։:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի կողմից բանկի կամ վարկային կազմակերպության հանդեպ ունեցած պարտավորության առաջին

խախտումից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: